Տաք կռիւներ տեղի ունեցան և՛ Եկատերինֆելդի ուղղութեամբ, ուր վրացիները գրաւեցին Դաղէթ–Խաչէն գիւղը, և՛ Շուլաւերի շրջանում, Սարաչլու գիւղի ճակատում, ուր մերոնք յետ մղեցին վրացական մի շարք կատաղի գրոհներ: Այսպիսով, վերջնականապէս ջարդ ու փչուր եղաւ զօր. Ցուլուկիձէի զօրամասը, և Ցուլուկիձէն ինքն էլ փախաւ մաղապուրծ՝ շրջակայ թուրքերի օգնութեամբ:

Դրանից յետոյ, վրաց հրամանատարութիւնը փոխեց. Ցուլուկիձէի փոխարէն նշանակեց զօր. Մազնիևը: Վրացիները շարունակեցին շտապով հասցնել նոր զօրքեր ու թնդանօթներ և պատրաստուել ընդհանուր յարձակման:

Դեկտ. 24–ին փոխ–գնդ. Կորոլկովը հրաման ստացաւ շարժուելու Շուլաւերի վրա, որը ենթարկուել էր վրացիների յարձակման. միլիցիոն գունդը երկու օր է դիմադրում էր հակառակորդի սաստիկ գրոհներին: Դեկտ. 25–ին, երբ հասան Կորոլկովի ուժերը, վրացական 5 գրոհ յետ մղուեց՝ մեծ կորուստներով թշնամու համար: Սարաչլու գիւղից դէպի խճուղին տանող տարածութեան վրա բոլոր վրացական դիրքերը մաքրուեցին. վրացիները կուի դաշտում թողին 86 դիակ:

Ցերեկւայ ժամը երկսի մօտերը, վրացիները, Թիֆլիսից հէնց նոր հասած ու վագոններից դուրս եկած մօտ 1500 մարդով, ուժեղ հրետանու ընկերակցութեամբ, դիմեցին յարձակման Շուլաւերի խճուղու շրջանում, Աշաղա–Սարայլ կայարանի մօտ: Շուլաւերի վրա թռչում էին վրաց սաւառնակները և նետում ռումբեր: Մերոնց հակայարձակումով թշնամին յետ շպրտուեց և Աշաղա–Սարայլը տրուեց մեր թնդանօթների կրակին: Այս կռիւներում ռումբի կտորներով երեք տեղից վիրաւորուեց անվեհեր տեղակալ Կուռո Թարխանեանը և սպանուեց միլիցիոն գնդի սպայ Տէր–Գրիգորեանը:

Այս ձևի կռիւները, գրոհներն ու հակագրոհները շարունակուեցին անընդհատ, մինչև դեկտ. 28:

Մինչ ճակատում հոսում էր արիւնը, Թիֆլիսում դաշնակիցները մի–ջոցներ էին փնտռում՝ վերջ տալու համար արիւնհեղութեան: Դեկտ. 25–ին անգլիական զօրավար Ռայկրոֆտի, ֆրանսական գնդապետ Շարդինիի և Ժորդանիայի կողմից ստորագրուեց մի համաձայնագիր, որով «պատերազմական գործողութիւնները վրացիների և հայերի միջև պէտք է անմիջապէս դադարեցուն և բրիտանական ու ֆրանսական բանակների սպաներից բաղկացած մի յանձնաժողով՝ ուղեկցութեամբ վրաց կառավարութեան ներկայացուցիչների՝ կը մեկնի ճակատ՝ բացատրելու համար համաձայնութեան մանրամասնութիւնները և հսկելու նրանց իրականացման վրա՝ համաձայն ներքոյ ստորագրեալների կողմից Երևան ուղարկուած հեռագրի»:

Այս համաձայնութիւնը կնքելիս ներկայ էր և Հայաստանի ներկայացուցիչ Ա.Զամալեանը, որը մերժեց ստորագրել՝ բողոքելով. մասնաւորապէս, Ախալքալաքի գաւառին վերաբերող մասի դէմ: Այդ պատճառով համաձայնագրի տակ, Ռայկրոֆտն ու Շարդինին աւելացրին, թէ՝ «Պ. Զամալեանը համաձայն չէ Ախալքալաքի գաւառը Վրաստանի կողմից գրաւելու կէտին»:

Նոյն օրը Երևան ուղարկուեց հետևեալ հեռագիրը. «Ներկայումս